



ՈւԵՖԱ-ի հովանավորությունը

ԱՐԻՔԵԶԱՆԸ ՀԵՆՎՈՒՄ Է ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Կարգավիճակ՝ 12.06.2021 թ., ժամը 12:17

Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուն ֆուտբոլի Եվրոպայի առաջնության անցկացման վայր է: 2013 թ. ի վեր «Սոկար» պետական նավթային կոնցեռնը ՈւԵՖԱ-ի հովանավորն էր, բայց վերջերս այն դուրս ցատկեց: Դա նոր ռազմավարության մաս է:

Միլվիա Շտյոբեր, tagesschau.de

Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուն իրեն ցույց է տալիս իր փայլուն կողմից. ֆուտբոլի Եվրոպայի առաջնության երեք խմբային խաղեր և քառորդ եզրափակիչներ անցկացվում են ազգային մարզադաշտում, որը բացվեց 2015 թ.:



 Միլվիա Շտյոբեր

tagesschau.de

@tavisupleba

Ութ տարի առաջ «Սոկար» պետական էներգետիկ ձեռնարկությունը 90 միլիոն եվրոյով մտել էր որպես հովանավոր: Այնուամենայնիվ, վերջերս ՈւԵՖԱ-ի կայքէջից բացակայում է դրա լոգոտիպը: Գերմանական լրատվամիջոցների, ինչպես «11Freunde»-ի («11Freunde») պահանջով ֆուտբոլի եվրոպական ասոցիացիան հաստատեց սոսկ «Սոկար»-ի դուրս գալը:

Նավթային կոնցեռնից բաժանվելու մի քանի պատճառներ կան. սպորտում ներգրավվելը պետք է շեղի Բաքվի ղեկավարության՝ մարդու իրավունքների ոտնահարումներից, որը հետապնդում և բանտարկում է ավտորիտար և կոռումպացված պետական առաջնորդների քննադատներին՝ հնչում է մեկ մեղադրանք, մյուսը՝ աշնանը, պատերազմի ընթացքում, թշնամի հարևանի դեմ քարոզչություն, որում «Սոկար»-ը կիսվում էր ամենից առաջ Ադրբեջանի ղեկավարության թվիթերով:



06.11.2021

Մպառում՝ կապված Եվրոպայի առաջնության հետ

Ֆուտբոլը խթանո՞ւմ է տնտեսությունը:

Մպորտային խոշոր իրադարձությունները, սովորաբար, հոգ են տանում տնտեսության մեջ պատշաճ բումի համար:

Նոր բիզնես ռազմավարություն

Ըստ ադրբեջանական կայքէջերի լուրերի՝ բաժանման նախաձեռնությունը, այսուամենայնիվ, ՈւԵՖԱ-ից դուրս չեկավ: Այսպիսով, «Սոկար»-ը որոշեց ավարտել հովանավորությունը: Մայիսի վերջին ֆինանսական լուրերի fins.az պորտալը մեջբերեց «Սոկար»-ի հասարակայնության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժնի պետի տեղակալ Իբրահիմ Ահմեդովին. նա նշել էր, որ ձոնարկությունը փոխել է բիզնեսի իր ռազմավարությունը: Այն նախագծերի համար, որոնք դրան այլևս չեն համապատասխանում, ծախսերը կրճատվում են: Դա ազդում է նաև ՈւԵՖԱ-ի հետ գործընկերության ընդլայնման վրա:

Մամուլի "ikisahil" օրգանը բացատրեց, որ 2019 թ. «Սոկար»-ը որոշեց մտածել բիզնեսի իր հին ռազմավարության մասին: McKinsey ձեռնարկության խորհրդատվությամբ մշակվել է նորը՝ մինչև 2035 թվականն ընկած ժամանակահատվածի համար, որը հաշվի է առնում համաշխարհային տնտեսության կերպարանափոխումը, արդյունաբերական չորրորդ հեղափոխությունը և էներգետիկ շրջադարձը:



02.09.2020 թ.

Ընտրություն Ադրբեջանում

Ժամանակակից և ավտորիտար

Ադրբեջանում այսօր ընտրություններ են: Նավթի բումից հետո ղեկավարությունը փնտրում է նոր ուղիներ, որպեսզի ամեն ինչ մնա այնպես, ինչպես կա:

Հարցեր քաղաքական օգուտի մասին

Հիրավի, հարց է առաջանում, թե որքանով էին Ադրբեջանի համար շահաբեր [սպորտային և մշակութային միջոցառումների՝ մեծ ծախս պահանջող հովանավորությունը, ինչպես նաև՝ մրցումների անցկացումը](#): Թեև երկիրն ամբողջ աշխարհում ավելի հայտնի է դարձել այնքանից հետո, երբ նա 2012 թ.անցկացրեց «Եվրատեսիլ» երգի մրցույթը կամ կազմակերպում է սպորտային իրադարձություններ, ինչպես 2016 թ. ի վեր Բաքվում ամեն տարի անցկացվող «Ֆորմուլա 1»-ը:

Մարզական և մշակութային իրադարձությունները, սակայն, նույնպես միշտ կապված էին ավտորիտար կառավարման, կոռուպցիայի և մարդու իրավունքների վիճակի մասին զեկույցների հետ: Դրա համար հոգում էին քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և քաղաքականության ազգային և միջազգային դերակատարները:



06.12.2015 թ.

Եվրոպայի խաղերն Ադրբեջանում

Բարձր գին մի փոքր փայլի համար

Երբ այսօր Ադրբեջանում մեկնարկում են առաջին «Եվրոպական օլիմպիական խաղերը», մասնակիցներն ու այցելուներն սպասում են գերփայլուն կուլիսների առջև սպորտային մի տոնակատարության, որին չպետք է խանգարի որևէ քննադատական ձայնի:

Հարևան թշնամի Հայաստանի վերահսկողության տակ գտնվող տարածքների բռնի հետգրավման համար Ադրբեջանում ակնկալվող քաղաքական օժանդակությունը սահմանափակված մնաց քիչ թվով երկրներով, ինչպիսին է նրա մերձավոր դաշնակից Թուրքիան: Դրա [նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը](#), այսուամենայնիվ, ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը միայն չի օգտագործի ներկա գտնվելու համար Բաքվում Ուելսի դեմ Թուրքիայի հավաքականների խաղին: Նա նաև կողոկոկի աշնանը, պատերազմի ժամանակ, գերեվարված Շուշա քաղաք:



ՎԵՐԼՈՒՈՒԹՅՈՒՆ 01. 10. 2020 թ.

Հակամարտություն Լեռնային Ղարաբաղի շուրջ

Ի՞նչ է ուզում Էրդողանը:

Այսպիսի մեղադրանք՝ Հայաստանի հետ հակամարտությունում Թուրքիան աջակցում է Ադրբեջանին ոչ միայն վերբալ:

Հետնավթային դարաշրջանը հայտարարված է

Բացի այդ՝ հովանավորչությունից «Սոկար»-ի դուրս գալը ցույց է տալիս ղեկավարության հարմարվելու ընդունակությունը նախագահ Իլիհամ Ալիևի հետ, որը 2003 թ. պաշտոնում

փոխարինեց իր հորը՝ Հեյդարին: Հաճախ թերագնահատվող նախագահին հաջողվեց դիմանալ մրցակիցների և հին ուժային կառույցների դեմ: 2017 թ., ի թիվս այլ բաների, նա իր կնոջը՝ Մեհրիբան Ալիևային, նշանակեց իր տեղակալ: Նա սերում է Բաքվի գործարար ընտանիքից, որը “Pasha Holding”-ի հետ տիրապետում է կորպորատիվ կայսրության, բայց ի հակակշիռ տրադիցիոն օլիգարխների՝ համարվում է ավելի ժամանակակից:



13.03. 2021 թ.

Մեղադրանքներ «Միության» քաղաքական գործիչների դեմ

Շփում բռնակալների հետ

Երկար ժամանակ «Միություն»-ում կան օգտավետ շփումներ Ադրբեջանի և Ղազախստանի հետ:

Արդիականացումը Ալիևի պատասխանն էր ծանր ճգնաժամերին, որը վրա հասավ երկրին 2014 թ. սկսած: Այդ ժամանակ առաջին անգամ նավթի գները ծայրաստիճան ընկան: 1995 թ. ի վեր Ադրբեջանն առաջին անկումն ապրեց, կենտրոնական բանկը ստիպված էր կտրուկ արժեզրկել ազգային արժույթը: Չնայած բռնաճնշումներին՝ բնակչության դժգոհությունը եկամուտների անկման վերավերմամբ արտահայտվեց բողոքներով: Դեռ նախորդ տարիներին փորձագետները նախագգուշացրել էին ցամաքում էներգիայի աղբյուրների չորացման մասին: Կասպից ծովից նավթի և գազի արդյունահանումն ավելի բարդ է և թանկ:

2018 թ. Դավուսի Համաշխարհային տնտեսական ֆորումում Ալիևն ասաց. «Երբ մենք նավթի գների զգալի անկում ունեցանք, ես ասացի, որ Ադրբեջանում մեզ համար արդեն սկսվել է հետնավթային դարաշրջանը: Մենք պետք է մոռանանք նավթն ու գազը»: Նա որպես զլխավոր նպատակ հայտարարեց տնտեսության դիվերսիֆիկացումը: Եկամտի հիմնական աղբյուրներ պետք է դառնան նորարարական տեխնոլոգիաները, ձեռներեցությունը և գյուղատնտեսությունը:

Թվային և կանաչ տեխնոլոգիաներ

Փաստորեն, Ալիևը բարձր կարգի պաշտոնները զբաղեցրեց երիտասարդ տեխնոկրատներով: Նրանք ապաբյուրոկրատացրեցին և թվայնացրեցին վարչարարությունը՝ ի ուրախություն այն քաղաքացիների, որոնք այժմ կարող են պետությունից ստանալ սպասարկման ծառայություններ՝ առանց կաշառքի: Արտասահմանյան ֆիրմաները պետք է կարողանան ավելի հեշտ ներդրումներ կատարել հատուկ տնտեսական գոտիներում:



04.11.2018

Ընտրություն Ադրբեջանում

Կոռումպացված՝ մինչև աշխատավարձ

Ադրբեջանում նախագահական ընտրությունները ոչինչ չեն փոխելու. ավտորիտար համակարգը բնութագրվում է կոռուպցիայով:


Պատերազմի ընթացքում ետգրավված տարածքների համար Ալիևը նախագծեց հավակնոտ պլաններ՝ թվային և կանաչ տեխնոլոգիաների կիրառմամբ և զարգացմամբ: Chapman Taylor բրիտանական ֆիրման, որը նախկինում արդեն շինարարական նախագծեր էր իրականացնում “Pasha Holding”-ի համար, ստացավ Շուշա քաղաքի պլանավորման հանձնարարություն: Թուրքական ձեռնարկությունները, որոնց մի մասը կապ ունի Էրդոհանի հետ, ստանձնում են ենթակառուցվածքների և լեռնահանքային նախագծեր:

Էլիտար կոռուպցիան մնում է

Փորձագետներն ու լրագրողները վկայում են, որ այդ հանձնարարությունները տրվում էին անանց մրցույթի հայտարարման և թափանցիկության: Մա սնում է ենթադրությունները, որ կոռուպցիայի դեմ պայքարը պետք է խնայի Էլիտար հատվածին, որը ցանկանում է տնտեսության նոր ճյուղերով, նավթից ու գազից դեմը, բացահայտել եկամտի աղբյուրներ:

Որ Ադրբեջանը ենթարկվում է արդիականացման, բայց ոչ ժողովրդավարացման, դրա մասին խոսում է նաև 2020 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքը: Ի հիասթափություն երիտասարդսերնդից շատերի՝ գերակշիռ մասով մնացին հին կադր պատգամավորները: Իշխող կուսակցությունից շատ նոր թեկնածուներ նույնպես անտեսվեցին: Կորոնայի համաճարակի ընթացքում ժամանակ առ ժամանակ գործող սահմանափակումները դեկավարությունն օգտագործեց կառավարության քննադատների դեմ խիստ միջոցներ ձեռքառնելու համար:

Մնում է տեսնել՝ արդյո՞ք Ադրբեջանի ղեկավարությունը լիովին դուրս կգա հովանավորչությունից և արդյո՞ք այլ պետություններ նման շարժառիթով նույնպես կմտածեն իրենց ներգրավվածության մասին: Այդ դեպքում ՈւԷՖԱ-ի պես միությունների համար հարց է առաջանում, թե ապագայում ինչպես կարող են ֆինանսավորվել թանկ իրադարձությունները:



02.11.2020 թ.

Ընտրություն Ադրբեջանում

Ժողովրդավարական ֆարսի գովեստ

Որ Ադրբեջանում խորհրդարանական ընտրությունները կեղծվեցին, հաստատել են շատ դիտորդներ:

Հրապարակվել է <https://www.tagesschau.de/wirtschaft/uefa-sponsor-aserbajdschan-oel-gas-image-101.html> կայքում